ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«_____» _____ 2025թ. N ---- -Ն

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 259-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի «Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման 2025 թվականի ծրագրի (ներառյալ՝ իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում համայնքի մասնակցության) վերաբերյալ» N 259-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 6-րդ գլխի աղյուսակը լրացնել նոր՝ 16-42-րդ կետերով՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևանի քաղաքի ավագանու
2025 թվականի ----------ի
N ------Ն որոշման

16	Աջափնյակ	01-001-0613-0003	Արդյունաբերական,ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության	Արդյունաբերական օբյեկտների հողեր	Աջափնյակ Հաղթանակի 1-ին փողոց 1-ին նրբանցք հ.61 հասցեին կից	
17	Աջափնյակ	01-001-0364-0059	բնակավայրերի	բնակելի կառուցապատում	Աջափնյակ Վ-3 թաղամասի հ.92 հասցեին կից	
18	Արաբկիր	01-003-0240-0052	բնակավայրերի	բնակելի կառուցապատում	Արաբկիր 23-րդ փողոց հ.22/3 հասցեին կից	
19	Արաբկիր	01-003-0240-0001	բնակավայրերի	բնակելի կառուցապատում	Արաբկիր 23-րդ փողոց հ.22/3 հասցեին կից	
20	Արաբկիր	01-003-0240-0036	բնակավայրերի	բնակելի կառուցապատում	Արաբկիր 23-րդ փողոց հ.22/2 հասցեին կից	
21	Արաբկիր	01-003-0014-0326	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	Հ. Էմինի հ.17 հասցեին կից	
22	Դավթաշեն	01-004-0129-0010	բնակավայրերի	բնակելի կառուցապատում	Դավթաշեն 9-րդ փողոց հ.52	
23	Դավթաշեն	01-004-0001-0012	բնակավայրերի	այլ հողեր	Տ.Պետրոսյան փող հ.81/2, Դավթաշեն 2-րդ թաղ հ.26/13 հասցեին կից	
24	Էրեբունի	01-005-0302-0088	բնակավայրերի	բնակելի կառուցապատում	Նոր Արեշ 14-րդ փողոց 20/1 հասցեին կից	
25	Էրեբունի	01-005-0387-0070	Բնակավայրերի	բնակելի կառուցապատման	Ազատամարտիկ ների պողոտա 4-րդ նրբանցք, հ	

					.29 հասցեին կից	
26	Կենտրոն	01-006-0012-0121	բնակավայրերի	բնակելի կառուցապատում	Ա.Թամանյան 10/1 հողամաս	
27	Կենտրոն	01-006-0012-0122	բնակավայրերի	հասարակական կառուցապատում	Ա.Թամանյան փողոցի հ.10/1 հողամաս	
28	Կենտրոն	01-006-0012-0003	բնակավայրերի	բնակելի կառուցապատում	Ա.Թամանյան փողոցի հ.10/3 հողամաս	
29	Կենտրոն	01-006-0012-0116	բնակավայրերի	բնակելի կառուցապատում	Ա.Թամանյան փողոցի հ.10/3 հողամաս	
30	Կենտրոն	01-006-0012-0006	բնակավայրերի	հասարակական կառուցապատում	Ա.Թամանյան փողոցի հ.10/3 հողամաս	
31	Կենտրոն	01-006-0012-0118	բնակավայրերի	հասարակական կառուցապատում	Ա.Այվազյան փող հ.2/2 հողամաս	
32	Կենտրոն	01-006-401-017	բնակավայրերի	ընդհանուր օգտագործման	Մ.Եկմալյան փողոց հ.16 հասցեին կից	
33	Մալաթիա-Սեբաստիա	01-007-0273-0230	բնակավայրերի	խառը կառուցապատում	Մ. Մելքոնյան փողոցին հարող տարածք	
34	Մալաթիա-Սեբաստիա	01-007-0532-0001	բնակավայրերի	ընդհանուր օգտագործման	Ա.Իսակովի պողոտա հ.1	
35	Մալաթիա-Սեբաստիա	01-007-0536-0001	բնակավայրերի	ընդհանուր օգտագործման	Ա.Իսակովի պողոտա հ.1	
36	Մալաթիա Սեբաստիա	01-007-0301-0479	բնակավայրերի	հասարակական կառուցապատման	Անդրանիկի փողոցի հ.34/4 և հ.30/6 հասցեներին կից	
37	Նոր Նորք	01-008-0507-1224	բնակավայրերի	բնակելի կառուցապատում	Բագրևանդ թաղամաս հ. 55/1 հասցեին կից	

38	Նոր Նորք	01-008-0010-0295	բնակավայրերի	այլ հողեր	Գյուրջյան փողոցի հ.2/2	
39	Շենգավիթ	01-011-0388-0153	արդյունաբերական,ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության	արդյունաբերական օբյեկտների հողեր	Հր.Վարդանյան փողոցի հ.18 հասցեին կից	
40	Շենգավիթ	01-011-0388-0145	արդյունաբերական,ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության	արդյունաբերական օբյեկտների հողեր	Հր.Վարդանյան փողոցի հ.18 հասցեին կից	
41	Քանաքեռ-Զեյթուն	01-012-0334-0110	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	Ուլնեցի փողոց հ.19/3 հասցեին կից	
42	Քանաքեռ-Զեյթուն	01-012-0029-0663	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	Հասրաթյան փողոցի հ.18/6 հասցեին կից	

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 259-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. **Խնդրի սահմանումը**

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի ավագանին որոշում է ընդունում Երևանի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման տարեկան ծրագրի վերաբերյալ, որում նշված են օգտագործման տրամադրման կամ օտարման եղանակը, ժամկետները, նպատակը, օգտագործման տրամադրման դեպքում՝ օգտագործման ժամկետը և վճարի չափը, ուղղակի վաճառքի դեպքում՝ վաճառքի գինը, իսկ հրապարակային սակարկությունների դեպքում՝ մեկնարկային գինը, ընդ որում՝ հողամասերի օտարման տարեկան ծրագրի մեջ պետք է նշվեն նաև հողամասերի գտնվելու վայրը, ծածկագրերը:

2. **Առկա իրավիճակը**

Երևան քաղաքի ավագանու մի շարք որոշումներով արդեն իսկ հաստատվել են օգտագործման տրամադրման և օտարման համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի ցանկեր: Երևանի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 259-Ն որոշման հավելվածի 48-րդ կետով 2025 թվականին օտարման և (կամ) օգտագործման տրամադրման համար առաջարկվող գույքի կազմում ներառվել են Երևան քաղաքի ավագանու որոշումներով հաստատված Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2010-2024 թվականների ծրագրերում ընդգրկված, սակայն դեռևս չօտարված Երևան համայնքին սեփականության իրավունքով պատկանող գույքը և հողամասերը: Միաժամանակ ցանկում չներառված հողամասերի ծածկագրերը հնարավորություն չեն տալիս անհրաժեշտության դեպքում այն օգտագործման տրամադրել կամ օտարել:

3.Կարգավորման նպատակը

Նախագծով Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 259-Ն որոշման հավելվածում կատարվող փոփոխություններով ցանկը լրացվում է նոր ծածկագրերով:

4. **Ակնկալվող արդյունքը**

Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 259-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու արդյունքում հավելվածը կավելացվի նոր ծածկագրերով, որի արդյունքում կավելանա Երևան համայնքի բյուջեի մուտքերը: Որոշման ընդունումը նպատակաուղղված է համայնքային գույքի հետագա օգտագործման արդյունավետության բարձրացմանը:

5.Նորմատիվ բնույթի հիմնավորվածությունը

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտում փոփոխություն կամ լրացում կարող է կատարել միայն նույն տեսակի և բնույթի նորմատիվ իրավական ակտով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ